# Արձանագրություն 2

*ՀՀ դատախազության կարիքների համար ընթացիկ վերանորոգման աշխատանքներ*
ձեռքբերելու նպատակով կազմակերպված ՀԳԴ- ՊԸԱՇՁԲ -16/2 ծածկագրով պարզեցված ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23. 05. 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Օ. Մուրադյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ավագյան
Ա. Սարգսյան
Ս. Ստեփանյան
Ռ. Առաքելյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գաբրիելյան

## 1. Պարզեցված ընթացակարգի գնային առաջարկների բացման մասին

(Օ. Մուրադյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) պարզեցված ընթացակարգի գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | |
|---|---|
| 1. | «Հեր-Մուշին» ՍՊԸ |
| 2. | «Ա.Վ.Ա. ՇԻՆ» ՍՊԸ |
| 3. | «Անդրեասյանշին» ՍՊԸ |
| 4. | «Շինարար-97» ՍՊԸ |

1.2. Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով.

- համապատասխանում են՝ «Ա.Վ.Ա. ՇԻՆ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը:
- չի համապատասխանում՝ «Հեր-Մուշին» ՍՊԸ, «Շինարար-97» ՍՊԸ և ««Անդրեասյանշին» ՍՊԸ կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

«Հեր-Մուշին» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը և գնային առաջարկը:

«Անդրեասյանշին» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը, հայտի ապահովման վճարման հանձնարարագիր լրացված է սխալ:

«Շինարար-97» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը չի բացվել armeps համակարգում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

1.3. Մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են ստորև բերված աղյուսակում

| N | Մասնակցի անվանումը | ինքնարժեք | շահույթ | ԱԱՀ | ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *3* | *4* | *5* |
| 1 | «Ա.Վ.Ա. ՇԻՆ» ՍՊԸ | 1771155 | - | - | 1771155 |

1.4. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

1.5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովի որոշմամբ առաջին (ընտրված մասնակից) և հաջորդաբար տեղերը զբաղեցնող ճանաչված մասնակիցները արտացոլված են ստորև ներկայացված ցանկում.

| N | Մասնակցի անվանումը | Զբաղեցրած տեղը |
|---|---|---|
| 1 | «Ա.Վ.Ա. ՇԻՆ» ՍՊԸ | 1 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

1.6 Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ կետերը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Օ. Մուրադյան)

2.1. «ՀԳԴ-ՊԸԱՇՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ դատախազության գնումների և նյութատեխնիկական ապահովման վարչությունում (ք. Երևան, Սունդուկյան 66ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Օ. Մուրադյան

Անդամներ՝ _____ Կ. Ավագյան

_____ Ա. Սարգսյան

_____ Ս. Ստեփանյան

_____ Ռ. Առաքելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա.Գաբրիելյան